

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ԿԳԱՆ ԲԱԶՈՒՄ
ԱՐՇԱԼՈՒՅՍՆԵՐ



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2003

Կարինե Աղաբեկյանը ճանաչված արձակագիր է: Նրա գրչին են պատկանում նաև «Սիրո հասունացումը», «Սիրո վերադարձը», «Կնոջ մենամարտը», «Սիրո կանչը», «Զգացմունքների ներդաշնակություն», «Սեր և արժանապատվություն» վիպակները, որոնք նշանավորեցին հայ առաջին սիրավեպի սկզբնավորումը և մեծ հետաքրքրություն առաջացրին ընթերցողների շրջանում:

Աղաբեկյան, Կ

Կգան բազում արշալույսներ: Կարինե Աղաբեկյան:- Եր.:

Գիտանք, 2003 - 160 էջ.

Կույր ճակատագիրը Սաթիի անցյալը նրա թշնամին էր դարձրել: Ումանք ամբողջ կյանքի ընթացքում չեն ապրում այն, ինչը բախտ վիճակվեց նրան: Ամուսնու ողբերգական մահը, դեռ չծնված երեխայի կորուստը... Եվ Սաթին ամբողջովին խրվեց գործի մեջ, վստահ, որ այլևս երբեք չի կարողանա սիրել, երբեք չի ուզեմա նորից դառնալ սիրո զոհը: Սակայն ամեն ինչ միանգամից փոխվեց, երբ Հրաչյա Վանունցը մորիկի պես ներխուժեց նրա կյանքը: Ընդամենը մի քանի օր անց նա արդեն երկնտում էր. միգուցե ժամանակն է հուշերը թողնել անցյալում և կյանքն սկսել նոր էջից...

ISBN 99930-963-1-8

© Կարինե Աղաբեկյան, 2003

Կազմի ձևավորումը՝ Ա. Աղաբեկյանի

Այս գրքի բոլոր հերոսներն ու իրադարձությունները մտացածին են, ուստի իրական անձանց ու դեպքերի հետ բոլոր զուգադիպությունները զուտ պատահականություն են:

*Ամուսնուս՝ Ալեքին,
սիրով ու երախտագիտությամբ*

ԳԼՈՒԽ 1

Մոսկվայի «Դոմոդեդովո» օդակայանում բոլոր թռիչքներն անորոշ ժամանակով հետաձգված էին: Օդակայանի շենքի հսկա պատուհաններից այն կողմ կաթնագույն մշուշից բացի, ոչինչ չէր երևում: Ուժեղ սառնամանիքից հետո օդի ջերմաստիճանը կտրուկ բարձրացել էր, որի հետևանքով առաջացած նեոգ մառախուղը կաթվածահար էր արել լավ սարքավորված ժամանակակից օդակայանի անխափան աշխատանքը: Ներսում անվերջանալի իրարանցում էր: Ձայրացած, շտապող, հույսը չկորցրած ուղևորների շարանը եռանդագին այս ու այն կողմ էր նետվում: Ազատ նստատեղ գրեթե չկար, նստածների մի մասը, արդեն հաշտված իրավիճակի հետ, ննջում էր, ունանք, դեռևս չհուսալքված, հայացքն ուղղում էին մե՛րթ չվատախտակին, մե՛րթ էլ ապակուց դուրս՝ ասես հրաշքի էին սպասում, իսկ ամենաանհամբերները բարձրամիտ-գործնական տեսքով խռնվել էին տեղեկույթի լուսամուտի առջև, սակայն բնության դեմ խաղ չկար, այս դեպքում նույնիսկ ամենագորեղներն անգոր էին:

Սաթինեն տարակաց հայացքով դիտում էր, թե մուտքի դռները, իրենք իրենց բացվելով, ինչպես են ներս թողնում նորանոր ուղևորների հերթական զանգվածը, որն այնուհետև միանում էր հուսախաբների բանակին, և խոր հոգոց հանեց. «Աստված չի ցանկանում, որ գնամ»: Այն երդումը հիմարությոն էր: Շատ ավելի լավ կլիներ, եթե մնար Նովոսիբիրսկում և Ամանորը դիմավորեր գործընկերների հետ: Մի ամբողջ օր է՛ ճանապարհին է, և հայտնի չէ, թե դեռ քանի ժամ է այսպես, բազկաթռին գամված, անցկացնելու: Լավ է, իր օդանավը գո-

նե հասցրեց վայրէջք կատարել մինչև օդակայանի փակվելը:

Սաթինենն ատում էր բազմամարդ հրմշտուքը, իրեն զգում էր՝ կարծես փակված խոր ու մռայլ հորի մեջ: Անշուշտ կարելի է դիմանալ, պայմանով, որ բացարձակապես հանգիստ հոգեվիճակում ես: Ինչպես կյանքը ցույց տվեց, ամեն ինչին էլ հնարավոր է դիմանալ, բայց ոչ հիմա, երբ նյարդերը գերլարված են: Առանց այդ էլ ինքը ցանկություն չուներ տուն վերադառնալու, սակայն երդումից բացի, մի այլ պատճառ ևս կար. թարմ ծաղիկներ դնել Դավթի շիրիմին:

Սաթինենն պայուսակից հանեց քիչ առաջ գնված ամսագիրը, բաց արեց ու սկսեց կարդալ: Բայց որքան էլ փորձում էր կենտրոնանալ ընթերցանության վրա, բան դուրս չեկավ, մտքերը տան մասին էին: Կրտսեր քույրը՝ Սուսանը, նրան դիմավորելու էր Երևանում: Իրենց հայրական տունը, ավելի ճիշտ՝ ագարակը, Ծաղկածորում էր, և Սաթինենն երեք տարի է քրոջը չէր տեսել, թեև Սուսանն անընդհատ հրավիրում էր, խնդրում, որ գա: Դառը կսկիծը պաշարեց Սաթինենին: Դժվար էր վերադառնալ այնտեղ, որտեղ այն մղձավանջի ահավոր հուշերն էին պահպանվում:

Կյանքն ընդհանրապես տարօրինակ է: Քույրն արդեն երկու տարի է՝ անուսնացած է, իսկ ինքը մինչև հիմա չի ծանոթացել նրա անուսնու՝ Վարդանի հետ: Լուսանկարին նա ամրակազմ մի երիտասարդ էր՝ հմայիչ ժպիտով: Այդ ժպիտում ինչոր բան կար, որը հիշեցնում էր Դավթին: Ահա՛, դարձյալ: Իրեն տված բոլոր երդումներից ու խոստումներից հետո՝ զոնե ճանապարհին չմտածել Դավթի մասին, Սաթինենն կրկին վերադարձավ ելակետին: Բայց չէ՞ որ մի ամբողջ օր դիմանում էր: Ի վերջո դա արդեն առաջընթաց է: Վերջին երեք տարին նա փորձում էր թել առ թել քանդել իր կյանքի կծիկը, իսկ հիմա հանկարծ հասկացավ, որ ամեն ինչ վերստին խճճվեց: Այժմ

դառնապես զղջում էր, որ տեղի տվեց Սուսանի հորդորներին: Միգուցե եթե մի տարի ևս անցներ... գուցե և դա այդքան ցավոտ չլիներ:

Վճռականությամբ վանելով տխուր հուշերը՝ Սաթինեն պահեց ամսագիրն ու վեր կացավ: Նստելուց հոգնել էր, մի քիչ քայլեց, ապա որոշեց թարմանալ և ուղղվեց դեպի կանանց սենյակը: Լվացվելիս հայացքը հանդիպեց իր արտացոլմանը: Հայելուց նայում էին թախծոտ աչքերը՝ խաժագույն, ինչպես և իրենց ընտանիքի բոլոր անդամներինը: Նա կտրուկ շրջվեց. անցանկալի հիշողությունների ալիքը դարձյալ հեղեղեց իրեն:

Մուրադյանների ընտանիքում երեք զավակ կար: Սաթինեն՝ ավագը, այնուհետև Վրույրը և ամենակրտսերը՝ Սուսանը: Սաթինեն հանկարծ հիշեց, որ իր վերջին նամակում քույրը ոչինչ չի գրել Վրույրի մասին: Գրեթե երեք տարի է՝ եղբորը չի տեսել: Սակայն հիմա չէր կարող մտածել այն մասին, ինչ եղել էր երեք տարի առաջ: Սաթինեն իրեն ստիպեց նայել հայելուն ու քննիչաբար տվեց. աչքերի տակի կապտաբծերն ու դեմքի գունատությունը բնավ չէին զարդարում, և հոգոց արծակելով բաց արեց շպարի պայուսակը:

Նա սուրճ ընպեց, մի քիչ էլ զբոսնեց՝ աննպատակ, երբեմն հայացք նետելով չվատախտակին, ավա՛ղ, նորություն չկար: Ի վերջո հոգնած՝ ազատ տեղ գտավ և ընկղմվեց ընթերցանության մեջ. այս անգամ որոշել էր հիրավի կարդալ հոդվածը:

- Տիկին Մեյա՞ն, - հարցրեց տղամարդու ձայնը:

Սաթինեն, հանկարծակիի գալով, ցնցվեց.

- Ի՞նչ, - կմկմաց՝ շփոթված հայացքը բարձրացնելով ձայնի ուղղությամբ, և նայեց ցինսե տաբատով ու կաշվե բաճկոնով տղամարդուն:

- Դուք Սաթի Մեյա՞նն եք, - կրկնեց անծանոթը:

- Այո՛, ես եմ, - պատասխանեց կասկածամտությամբ. այդ

փաղաքշական անունով սոսկ մտերիմներն էին դիմում նրան:

Տղամարդը բարձրահասակ էր, խիտ մազերը խնամքով սանրված էին, դեմքը, որի վրա աչքի էին ընկնում վառ սև աչքերը, փայլում էր սրտաբուխ ժպիտով:

- Ողջո՛ւյն, - ուրախացած արտաշնչեց նա: - Ես Յրաչյա Վանունցն եմ:

Տղամարդու հրճվալի տեսքը վկայում էր, որ նա իրոք շատ ուրախ է այս հանդիպման համար:

- Ո՞վ, - անհանգստացած հարցրեց Սաթին. ինքը ոչ մի Յրաչյա Վանունցի չէր ճանաչում:

- Յրաչյա Վանունցը: Վարդանի եղբայրը, - նրա ժպիտն ավելի լայնացավ:

- Վարդանի՞, - Սաթիի նշածն աչքերը զարմանքից կլորացան, - Սուսիի ամուսնո՞ւ:

- Այո՛, - հաստատեց նա, - հուսով եմ՝ չե՞ք առարկի, եթե միանամ ձեզ: Ես նույն չվերթի տոմս ունեմ:

Թվում էր, թե նա անսքող հետաքրքրությամբ հետևում է Սաթիի արձագանքին:

Սաթիի դեմքը լարվեց.

- Իսկ ո՞նց ճանաչեցիք ինձ: - Այդ հարցը շատ տեղին էր:

- Ձեր լուսանկարների շնորհիվ, - հակիրճ պատասխանեց Յրաչյան: - Յիմա իրերս կհանձնեմ պահասենյակ, այնուհետև կարող եմք գնալ սուրճ կամ թեյ խմելու: Դեմ չե՞ք:

Սաթին գլխով արեց.

- Ինչո՞ւ չէ: Հաճույքով:

«Գուցե և մեծ հաճույքով», - մտածեց նա. արդեն մոռացել էր, թե վերջին անգամ երբ էր իրեն նման հաճելի զարմանք պատճառել ինչ-որ մեկի հայտնվելը: Այնուհետև աչքերում մտահոգություն առկայօճեց: Ինչո՞ւ հատկապես նույն չվերթով: Ակնհայտ է, որ այդ պարոնն այստեղ պատահաբար չէ: Շատ

հավանական է՝ Սուսանն ու Վարդանը հիմա խոհանոցում թեյ են խմում և իրենցից գոհ՝ քթի տակ ծիծաղում են, թե ի՞նչ «խորանանկամիտ» բան են հնարել: Եթե կյանքում ինչ-որ բան կար, առանց որի ինքը միանգամայն կարող էր յուր գնալ, առնականության այս ժպտերես մարմնացումն էր, անգամ եթե անունը Հրաչյա Վանունց է: Դե՛ սպասիր, Սուսի: Հենց որ գրկախառնվեն, անպայման մի քանի քաղցր խոսք կասի իր սիրելի քույրիկին:

Շուտով Հրաչյա Վանունցը կրկին նրա առջև էր.

- Նորից բարև: Գնա՞նք:

Սաթին ուշադրությամբ նայեց տղամարդուն՝ փորձելով հասկանալ. արդյո՞ք դավադրության մասնակից է, թե՞ նա էլ է ծաղկածորցի երկու աղունիկների անմեղ զոհը: Եվ հաստատ որոշեց դա պարզել:

- Գնացինք, - ժպտաց և արագ վեր կացավ:

Սեղանի մոտ նստած՝ նրանք մի պահ ուսումնասիրում էին միմյանց: Սուրճ պատվիրելուց հետո Սաթին դարձավ նրան.

- Պարզապես զարմանալի զուգադիպություն է: Այդ ինչպե՞ս եղավ, որ հանդիպեցինք: Ես անգամ չգիտեի, թե Վարդանը եղբայր ունի:

Թարթիչների տակից զննելով տղամարդուն՝ նա եզրակացրեց, որ յուրաքանչյուր կին նրան գրավիչ կհամարեր, յուրաքանչյուրը, բացի մեկից՝ Սաթինե Մեյրամից: Նա չէր կարող դա իրեն թույլ տալ: Հրաչյա Վանունցը կլիներ մոտ 35-36 տարեկան, նրա դեմքի գլխավոր հմայքը այտափոսիկների և ուժեղ, կամք արտահայտող ծնոտի արտասովոր ներդաշնակությունն էր: Հապա աչքե՛րը... Այդ բոցափայլ աչքերի տիրոջը իր անունը շատ հարմար էր...

ԳԼՈՒԽ 8

Կեսգիշերը վաղուց արդեն անցել էր, իսկ նա դեռ շարունակում էր անշարժ նստել անկողնում՝ ականջ դնելով ամենափոքր իսկ խշշոցին: Քամին զարկում էր պատուհանին, ձնաբուքը նկատելիորեն ուժեղացել էր, բայց Սաթին չէր մտնում, նա ինքը կարծես կրակի էր վերածվել: Հայացքը հառած խավարում պարող ձնափաթիլներին՝ խորհում էր, թե իր կյանքն ինչպես փոխվեց այն պահից ի վեր, երբ հանդիպեց Հրաչյային: Երբեք, նույնիսկ իր ամենամվիրական մտքերում, իրեն թույլ չէր տալիս մտածել ինչ-որ բանի մասին, ինչը դուրս էր պարկեշտ վարքին վերաբերող՝ իր պատկերացումների շրջանակներից: Իսկ այժմ մտադրվել էր կատարելու այնպիսի մի բան, որն առաջներում աներևակայելի կհամարեր, և ըստ որում հիանալի էր զգում իրեն: Ականջ դնելով անպարզորոշ ձայներին՝ մտածում էր այն մասին, որ այս գիշեր ինքն այլևս չի զգա ո՛չ թախիծ, ո՛չ ափսոսանք և ո՛չ էլ ցավ կամ կորստի դառնություն: Եվ ոչ միայն այս գիշեր, բայցև վաղը, հաջորդ օրը. միշտ: Սպասողական վիճակը ջերմ քուլայի պես պարուրել էր նրան:

Անցավ մեկ ժամ, իսկ նա տակավին նստած էր անկողնում: Վերջապես վեր կացավ ու մոտեցավ լուսամուտին: Պտտվող փաթիլները պսպղում էին աչքերի առջև, և անգամ աչքերը փակելիս տեսնում էր դրանք: Նրան հանկարծակի համակեց պարելու բուռն ցանկությունը, դա նման էր խենթության: Բայց այդ վիճակն իրեն այնքան դուր եկավ, որ Սաթին մտածեց. *Ի՛նչ լավ է: Եթե միայն միշտ այսպես լիներ...* Իսկ նոր օրն արդեն ծնվում էր՝ իր կյանքի նոր արշալույսը:

Անցնելով ննջասենյակով՝ նա կամաց, առանց ձայն հանելու, դուռը բացեց, նայեց դուրս, քայլ արեց դեպի միջանցք և

դուռն իր հետևից զգուշությամբ ծածկեց՝ ջանալով չաղմկել: Գրեթե ոտնաթաթերի վրա քայլելով՝ միջանցքով առաջ անցավ և երբ հասավ Զրաչյայի դռանը, խոր շունչ առավ, շունչը պահեց ու մի մատով դիպավ մետաղե սառը բռնակին: Որոշ ժամանակ այդպես կանգնել էր, ապա սիրտ առավ ու հրեց դուռը, որը, դավաճանաբար ճռռալով, դանդաղությամբ բացվեց:

Սաթին անշարժացավ: Սիրտը խելահեղորեն բաբախում էր, նա դժվարությամբ էր կարողանում շնչել՝ ասես օդը դուրս չէր գալիս թոքերից: Այնուհետև անձայն, ինչպես մկնիկը, գողունի ներս մտավ՝ նայելով իր շուրջն ու ջանալով ընտելանալ մթությանը: Տան առջևի լապտերը հատակին գծագրել էր պատուհանի լուսավոր քառակուսին: Ներքևի շուրթը կծելով՝ նա դուռը շատ դանդաղ ծածկեց՝ մտքում անիծելով այս տան հնացած, չորանալուց ճաքճքած դռները, որոնք այդպես ահավոր ճռռում էին: Այդ պահին ցանկացած թույլ հնչյուն հավասարազոր էր մի մեծ արկի պայթյունի:

Հանկարծ լսելով, թե Զրաչյան ինչպես շարժվեց՝ Սաթին քարացավ՝ դեմքով կանգնած դեպի դուռը: Որոշ ժամանակ անց ուսի վրայով հետ նայեց, որպեսզի համոզվի, որ նա առաջվա պես քնած է: Այժմ պետք էր դուռը կողպել: Նա բանալին պտտեց փականի մեջ, և չխկոցն ածագանքի նման տարածվեց տնով մեկ: Եվ դարձյալ վախով նայեց մահճակալին մեկնված մութ կերպարանքին: Ոչ մի շարժում: Ապահովության համար զգուշությամբ վերցրեց մոտակա բազկաթոռը և բարձրացնելով՝ դեմ արեց դռանը:

Ուշադիր նայելով քնած տղամարդուն՝ Սաթին դանդաղ զգույշ քայլերով մոտենում էր նրան: Երբ ծնկները դիպան մահճակալին, նա անշարժացավ: Հայացքն ընկավ Զրաչյայի դեմքին, որը հազիվ էր նշմարվում մթության մեջ: Սաթին շունչը պահեց ու խոնարհվեց վրան՝ նրան զննելով այնպես, կար-

ժես թե առաջին անգամ էր տեսնում: Նրա դեմքը ինչ-որ տղայական բան ուներ և ընդամին առնական էր: Աչքերը փակ էին, սակայն Սաթին հիշում էր դրանց խորությունը: Դիմագծերն ասես կերտված լինեին քանդակագործի հատիչով. բարձր ճակատ, հաստատակամություն արտահայտող՝ ամուր ծնոտ, խոշորավուն քիթն ընդհանուր տպավորությունը չէր խախտում, զգայական շուրթերը կիսաբաց էին՝ երևան հանելով ճերմակ ու փայլուն ատամնաշարը: Հրաչյան բնավ ավելի վատ տեսք չուներ, քան առաջին անգամ, երբ հայտնվեց նրա առջև: Շուրթերը դողացին, և Սաթին կծեց ներքևինը, որ դողը դադարեցնի: Պահը եկել էր. նա մի շարժումով տնազգեստից դուրս սահեց, վերմակի ծայրը բարձրացրեց ու սողոսկեց տակը: